



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊՐԵԼԻԿԱՑԱԲՆԵՐ ԹՈՒՂՐ ՀԱՐԱՑՄԵՐԻ, ՄԻՋԱՑԵՐ

Ա. Ա. ԼԻՏՎԻՆՈՎ

ԽՈՅՄ  
ԽՈՎՅԱՆԻԹՅԱՆ ՀԵՄԱՐ  
ՄՊԱՇ ՊԵՅՉԵՐՈՒՄ

ԿՈՒՍՀՐԱՑ

ՅԵՐԵՎԱՆ, ԱՆ

1934

$q u_t$

1026

W37

Պետական թուղթ յերկրագիր, միացնելը՝


Ա. Ա. ԼԻՏՎԻՆՈՎ

ԽՍՀՄ  
ԽԱԴՐԱՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ  
ՄՆԱԾ ՊԱՅՔԱՐՈՒՄ

A 38549  
II

18948

Ճառ. ԽՍՀՄ Կենսզարձկանքի IV հաստեղանում  
1983 թ. դեկտեմբերի 29-ին



Արքայցրի Լ. Արևիչան

Համամված և պատուարյան 7 հաւակ. 1998 թ.

Առողջապահ և սպազրելու 12 հաւակ. 1994 թ.

Դաշնակիս № 7809 (բ) Հրան. № 171

Պատգեր № 8, Ցիրած 2,000

9,000 սպազր. Տառե

---

Կուսական ապարան. Ցեղական

Ընկերներ, Կինուրոնական Գործադիր Կոմիտեի անդամներ,  
Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախադահն իր ընդ-  
հանուր գեկուցման շրջանակներում Զեղ առից միջազգային գրու-  
թյան հակիմն բնութաղբությունը, և ինձ մնում ե լոկ լրացու-  
ցիչ հաղորդում անել նույն թեմայի շուրջն ու քիչ ավելի ման-  
րաժամանորեն զարդացնել նրա շոշափած դրույթները:

## ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՖԱՇԻԶՄԻ ԵՐԱՆ ՎԵՐՋԱՑԵԼ Ե

Յես Զեր առաջ հանդես եմ գալիս, ընկերներ, միջազգային  
դիվանագիտության յետուն գործունեյության և բարձր ակտիվու-  
թյան պահին: Առանց շոշափելու նրա վորակական ցուցանիշնե-  
րը, կարելի յե պնդել, վոր այդ ակտիվությունն առաջանում է  
միջազգային հարաբերությունների, միջազգային խմբավորությու-  
նի մեջ աեղի ունեցած ու տեղի ունեցող զդալի տեղաշարժերի և  
դիվանագիտական պլանների ու կոմքինացիաների հասունացման  
ու ձեռվորման հետեւանքով: Յեթե կարելի յե խոսել դիվանագի-  
տական երաների մասին, ապա մենք, անկառակած, այժմ կանգ-  
նած ենք յերկու երաների սահմանադրում:

Պատասխանելու համար այն հարցըն, թե իրոք ինչ և պտ-  
տահել կամ ինչ և տեղի ունենում այժմ միջազգային կյանքում,  
յես ինձ թույլ եմ տալիս համառոտակի կանդ առնել այդ կյան-  
քի վերջին 15 տարվա զարդացման վրա: Մենք Զեղ հետ միասին,  
ընկերներ, զիտենք կտակիտալիստական պետությունների բնույթը,  
խմբերի ակտմի բնույթը, նրա արագին խնդիրներն ու ֆունկ-  
ցիաները: Հիմնականում այդ խնդիրներն ու ֆունկցիաները  
չեն գոխվում: Փոխվում ե լոկ այդ խնդիրների իրազործման

տակաիկան՝ պատմականորեն փոխվող իրագրությունների համեմատ, և հենց այդ փոփոխվող տակտիկան ել ընդունված ե զիվանագիտություն անվանել, Կապիտալիստական, հատկապես իմաներիալիստական, պետության հիմնական գիծն այն ե, զոր նա դնում ե այնպիսի արտաքին խնդիրներ, զորոնց իրագործումը նա չի պատկերացնում առանց ուժ գործադրելու, առանց պատերազմի թեթե դրա ավելորդ ապացույց ե պահանջվում, առա այդ մենք ստացանք այն պատասխանում, զորը մեզ տրվեց Ժընեվում լիակատար զինաթափման, պատերազմի միջոցների լիակատար վուշընչացման մեր առաջարկին: Մեզ այնտեղ պատասխանցին, թե պատերազմից հրաժարվելու մասին խոսք անդամ լինել չի կարող, թե ժամանակավորապես կարելի յե խօսել խաղաղության մասին, բայց պատերազմի պետք ե պատրաստվել շարունակի: Այդպիսի պատասխան մեզ տվին հելլով-Բրիտանի պակտի ընդհանուր ստորագրումից թե առաջ և թե հետո, մի պակտ, զորն ասես թե հալածում ե պատերազմին իբրև միջազգային վեճերի լուծման մեթոդ:

Բայց վշջրողը կաղիտալիստական յերկրներն են, զոր ամեն ժամանակ կամ միշտ միատեսակ ուժգնությամբ պատերազմ են ցանկանում: Ամեն մի ամենից իմպերիալիստական պետություն այս կամ այն ժամանակամիջոցում կարող ե խորապես պացիֆիստական դառնալու Այդ լինում ե, յերբ նա կամ պարտություն ե կրում պատերազմում և նրան վորոշ ժամանակ ե հարկավոր լինում, վորպեսզի ուժեր հավաքի նոր պատերազմի համար, կամ յերբ նրա դեմ կանգնում ե ավելի ուժեղ մի պետություն կամ պետությունների մի խմբավորում, և ընդհանուր քաղաքական իրազրությունը նրա համար անբարենպաստ ե լինում, կամ թե յերբ նա հազեցել ե հաղթանակներով ու նվաճումներով և վորոշ ժամանակի կարիք ե զգում այդ նվաճումները յուրացնելու համար: Լինում են ուրիշ գործոններ ել, վորոնք վերացնում են պատերազմելու ցանկությունը, ինչպես, որինակ, ներքին անկարգությունները, տնտեսական անդրությունը և այլն:

Համաշխարհային պատերազմից հետո, զորին մասնակցում ելին մատ 40 պետություններ, այդ թվում առանց բացառության բոլոր մեծ պետությունները,—ամբողջ կաղիտալիստական աշխարհը միառժամանակ պացիֆիստական զարձավի: Պարաված յերկրների պացիֆիզմը, յերկրներ, զորոնցից խելել ելին պատերազմ վարելու դրեթե բոլոր միջոցները, բացատրելու կարիք չկա:

բայց և հազվող յերկրները, վորոնց զգալի մասը բավարարեց իր իմակերիալիստական տենչերը, միառժամանակ շահագրգոված չեցին հետազա պատերազմներով։ Ճիշտ ե, չեյին վերացված կապիտալիստական հակասություններն իրենց՝ հաղթողների միջն, սակայն նրանք շատ հյուծված եյին իսկույն և թոր պատերազմների ձեռնարկելու համար նրանք վորոճ արին պատերազմական յետանդը շուր տալ ընդգկտ միջազգային նոր ուժի, վորն անմել եր հանձին Խորհրդային հանրապետությունների, բայց այդ պատերազմի համար նրանց զենքը բթացած դուրս յեկավ, և նրանք խելացի կերպով ու ժամանակին շուապեցին զաղարեցնել պատերազմական դիսկուսիան մեզ հետ Միաժամանակ կապիտալիստական պետություններում պատերազմական հաշիշեց սկսեց ուշքի գալ պրոլետարիատը և պահանջել հատուցանելու այն ուղարտամութակները, վորը նրան տվիլ եր բուրժուազիան պատերազմի ժամանակը Պատերազմն ուժեղ ուսակցիա և հակապատերազմական տրամադրություններ առաջացրեց նաև մանր բուրժուազիայի մէջ։ Այսուհետեւ անհրաժեշտություն ծագեց վոքք ինչ կարդի բերելու պատերազմի հետևանքով խախավոն ֆինանսներն ու եկոնոմիկան։

Այս ամենը միասին վերցրած ստեղծեց բուրժուական պացիֆիստական դիվանագիտության երան, վորը տեսեց մինչեւ վերջին ժամանակներս։ Տեղի ունեցան միջազգային անթիվ հանդիպումներ և կոնֆերանսներ, ստեղծվեց Ազգերի լիգան, վորը տարեկան միքանի անդամ արտաքին գործոց մինիստրների և վարչապետների հանգիպումներ եր կազմակերպում։ Այդ հանդիպումները և կոնֆերանսները տեղի եյին ունենում հրազդարակով՝ հանարակացնելու միաժամանակ վերանակողությամբ, և այնուղի խոսում եյին միայն խաղաղության ու ժողովուրդների բարեկամության մասին։ Քիչ չնշյին անշուշտ նաև անդրկուլիսային հանդիպումները և զաղանի խոսակցությունները, բայց նրանք «անկապալ», «ընդհատակյաց բնույթ» եյին կրում։ Համենայն դեպս, 12 տարի ջանասիրությամբ խոսում ե զրում եյին խաղաղության ու դինաթափության մասին և ստեղծում համապատասխան կոնվենցիաների նախագծերը։

Իսկ մինչ արտաքին դործոց մինիստրները ջանասիրությամբ խոսում եյին խաղաղության մասին, պատերազմական ու ծովային մինիստրները և զլամավոր շտաբները նույնպես պարապ չեյին մնում, նույնազիսի ջանասիրությամբ լրացնում եյին պա-

տերազմի հետևանքով նվազած դինապաշարը, զինապիտույքը՝ նրանց վրա ավելացնելով ուղմական նոր գյուտերի արտադրանքը։ Մինչ այդ՝ կապիտալիստական միջավետական հակառակություններն ընդարձակվեցին, խորացան, սրվեցին և սկսեցին ավելի բարձրաձայն զգալ տալ իրենց մասին։ Աննախընթաց ուժով նույթյամբ և տեականությամբ բռնկված անտեսական ճգնաժամները ավելի սրեց գոյություն ունեցող հակառակությունները, նորեն ավելացնելով նրանց։ Յերկրորդ ինտերնացիոնալի ղեկավարած սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները, վորոնք հավատում եյին դեմոկրատիայի ամենազորությանն ու հավիտենականությանը, նրա՝ խաղաղություն ապահովել եյին ու սոսացել ամեն մի հեղափոխական պայքար բուրժուազիայի դեմ, — միքանի յերկրներում դուրս նկավեցին իրենց բոլոր դիրքերից։

Այդ կուսակցությունների հետ միասին մեծ կորուստ ունեցավ նաև մանր բուրժուազիայի սոտիկալ ինտելիգենտական ու պացիֆիստական մասը։ Միևնույն ժամանակ աճեց այնպիսի մարդկանց մի սերունդ, վորոնք չեյին ճանաչում ու չեյին կընէ համաշխարհային պատերազմների սարսափները և դրա համար ել վարակված չեյին այն հակապատերազմական տրամադրություններով, վորոնց կառավարությունները մինչև վերջին ժամանակներս պետք և պացիֆիզմի վորոշ թիկուլ բերանացին տուրք աւային։ Յեզ անհնար եր այլս այդ տուրքը տալ վորովհետև նրան չափազանց խիստ եյին հակառակ կառավարությունների գործողությունները։ Յեզ ահա վերջացավ բուրժուական պացիֆիզմի երան Բարժուական մամուլը խաղաղության պրոբլեմի փոխարեն սկսեց բացահայտորեն քննարկել պատերազմի պրոբլեմները նրանց բոլոր զգվելի մանրամասնություններով։

#### ԳԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԱՎԱՆՏՅՈՒԹՅԱՆԵՐԻ ԴԱՂԱՓԱՐԱԽՈՍՆԵՐԸ

Ժընեվում թե դիվանագիտական հանդիսումների ժամանակ և թե խորհրդակցություններում զինաթափման վորխարեն սկսեցին կենարունական տեղը զրավել սպառազինվելու կամ սպառազինում ավարտելու հարցերը։ Այնուղղ վորակել կառավարող հին կուսակցություններն ու կլիկները չկարողացան վերադասավորվել ժամանակի նոր, ուղմական վորուն համապատասխան, նրանց փոխարինելու յեկան նոր կուսակցություններ, նոր կլիկներ, նոր

մարդիկ, տնշյալում վոչ մի պացիֆիզմով չարատավորված ու չվարկարեկված իրենց նոր դաշտավարախոսությամբ։ Պացիֆիզմի ամեն մի ձեռ, միջաղգային խաղաղության ձգուումը հայտարարվում են իրենց բարոր մահացու մեղքերի մարմնացում, դավաճանություն՝ մարդկության խղեալներին։ Մարդկության խկական իդեալները, տևանում եք, հավետնական պայքարն է ժողովուրդների միջն, պայքարը ցեղերի միջն, կրոնների միջն, նրանց փուագարձ բնաջնջումը։ Միայն պատերազմը կարող է նորից աղերգացնել, նորոգել և յերիտասարդացնել մարդկությունը։ Այդ վորով պետք է գաստիարակի պատանեկությունը։ Այդ ուսմունքին պետք է ծառացն մանսպալ կերպով մամուլը, գրականությունը, դիտությունը, արմիսաւը։ Այդ նոր դաշտավարախոսությունից, հիշտ և, չափազանց հեռավոր հնության հոտ և փչում, միջնադարի բորբոքի հոտ և փչում, նա հարություն և տալիս սուրբ ինկուպիցիայի պատերներին ու մեթոդներին, բայց ի սեր նրա հաղթանակի, հանուն այդ նոր «քաղաքակրթակալան միսիայի», արշավանք և հայտարարվում ընդգեմ մարգսիզմի, ընդդեմ կոմունիզմի, ընդգեմ սաղբիկալիզմի։

Իմ հաղորդման սահմանները չընդարձակելու համար յետ ինձ իմուլլ եմ առլիս այսուղ կանգ չառնել այդ նոր կուսակցությունների սոցիալական ընույթի ու կազմի և նրանց յերեան գալու տնտեսական պատճառների վրա, վորովհետեւ դա անմիջականորեն իմ հաղորդման թեմային չի վերաբերում։

Պայքարը համաշխարհային կոմունիզմի գեմ—դա, սակայն, ավելի շուտ ցուցադրական կամ հնառավոր նպատակ է։ Այդ պայքարի զիմակի տակ նկատի յեն ունենում իրազործել ավելի համեստ, նեղ տղղային խնդիրներ, վորոնք մերկացված ձևով կոչում են պայմանագրերում ինչպես հիշում հիշատակված, այնպես ել չնիշատակված հողերի հափշտակում։ Բավկական և ծանոթանալ «նոր» գաղափարախոսության համար պայքարողների զրականությանը՝ համոզվելու համար, վոր յեթե պատերազմի աստվածունին նրանց ժամա, ապա նրանք շատ ել մանրակրկիտ չեն լինի, չեն բավականանարացաւապես այն տերիտորիաններվ, վորոնք գտնվում են նրանց առելի մարգսիստների վերահսկողության ներքո, բայց չեն հրաժարվի կտրտելու նաև բուրժուական հողերը (ծիծառ) և, թերեւ, նույնիսկ այնպիսի հողեր, վորոնդ տիրապետում են նրանց աղ-

գակից գաղափարները։ Այդպես և զրությունը, համենայն դեպք, յեվրոպական յերկրներից մեկում։

Կամ մի ուրիշ յերկիր եւ վորն ավելի «առաջավոր» կամ, թերևս, ավելի պատրաստված դուրս յեկազ և վորն առանց բարդ գաղափարախոսության ու տեսական պատրաստության դիմելու, ուայմանագրերի ունվիզիան միանդամից փոխարինեց սահմանների ունվիզիայով (ծիծաղ, ծափահարություններ) և այդ ունվիզիան հաճանարարեց վոչ թե դիվանագետներին, այլ իր գեներալներին, վորոնց առաջնորդությամբ ամբողջ բանակներ աղատորեն քայլում են ասիական անծայրածիր մայր ցամացում ամեն ուղղությամբ, հաշվի չառնելով վոչ մի սահման և վոչվոքի իրավունքները։ Սակայն այստեղ ևս բանն առանց վորոշ իդեոլոգիայի դրուս չի գալիս։ Բայդ այդ իդեոլոգիան դեռ վերջնականապես չի բյուրեղացել, նա փոքր ինչ յերկշոտ, փորձնական ընույթ և կրում, ընդունելով մերժ յեվրոպական քառակարգությունը կոմունիզմից պաշտպանելու ձև, մերժ նոր համաստիական ցեղի տեսության ընույթ, ցեղ, վոր պետք եւ բարենորհի այդ թեորիայի հեղինակների տիրապետությամբ՝ իր վրա։ (Ծիծաղ)։ Բայց տվյալ դիպում ևս իդեոլոգիան քողարկում և միանդամայն ալրոզայիկ աղդային-նվաճողական, իմպերիալիստական նպատակներ կարիք չկա զարմանալու իմ ընութագրած՝ ընդհանուր արմատներ ու միատեսակ նպատակներ ունեցող յերկու իդեոլոգիաների պաշտպանների միջն նշվող քաղաքական մերձեցմանը։

Յես հարկ ևս համարում վազորոք պարզաբանել նրանց, ում իւելին կփշի աղնվաբար վրդովվել միքանի յերկըների քաղաքականության մեջ մարմնավորված թեորիաների իմ անկեղծ քննադատությամբ, յերկըներ, վորոնց հետ մենք դիվանագիտական նորմալ հարաբերություններ ենք պահպանում, —վոր նրանք ինքները բավականաչափ չարարկում են մեր կոմունիզմի մասին բացահայտ դատադրություն անելու իրենց իրավունքը, կոմունիզմ, վորը նրանք միաժամանակ խեղաթյուրում են, գորակազի յես ևս կարողանայի ինձ թույլ տալ միքանի դիտողություններ անելու նաև նրանց քարոզած թեորիաների մասին, վորոնց եյլությունն այժմ բոլորին հասկանալի յեւ և ամբողջ աշխարհում վայելում եւ բավական կասկածելի ժողովրդականություն։ (Ծափամատություններ)։

ԿԱՐԴԱՏՈՎԵՍՏՈՎԿԱՌՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԵՐԵՔ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ  
ՊԱՅՔԱՐԾ

Յես, ընկերներ, Ձեղ տվի դիվանագիտական այն նոր երաւ-  
յի հիմնական բնութաղբառթյունները, վորի մասին յես խոսեցի  
իմ հաղորդման սկզբում: Դիվանագիտության նոր խնդիրներին  
սպառք և համագալատասխաննեն նաև նոր ձևեր: Ահա թե ինչու քիչ  
թե շատ բացահայտ ու հրապարակային միջազգային կոնֆերանս-  
ները միջազգային հարաբերության արգեն հնացած մեթոդ են  
գուանում, իրեն աեզզ զիջելով չորս, յերկու և յերկու մինիստր-  
ների ավելի սահմանափակ, վոչ-հրապարակային հանդիպումնե-  
րին, իսկ գոյություն ունեցող միջազգային կազմակերպություն-  
ներից պետություններն իրար հետեւ յերես են դարձնում: Խա-  
ղաղության, զինաթափության մասին կարելի յէ հրապարակով  
խոսել, պատերազմի, սպառազինությունների մասին ավելի հարմար և  
խոսել աչք-աչքի, յերեքով կամ չորսով (ծիծաղ, ծափանառու-  
րյաններ):

Դուք, սակայն, սխալ պատկերացում կատանայիք միջազգա-  
յին դրության մասին, յեթե իմ ասածների հիման վրա դուք  
կարծեցիք, թե բոլոր կազիտալիստական յերկրներն այժմ ու-  
տեսքազմի յեն ձգուում և անմիջականությունն նախապարասառում են  
այն: Ամեններն Այն խիստ փոքրաթիվ յերկրների կողքին, վո-  
րոնք կամ արդին զիվանագիտությունը փոխարինել են սպառ-  
կան ովկերացիաներով, կամ, տակալիին դրան անպատճառատ լինե-  
լով, պատրաստավում են այդ աննել վոչ-հեռու ազագայում,— կան  
այնպիսի յերկրներ, վորոնք առայժմ նման խնդիրներ չեն առա-  
ջազրում: Երանք ունեն իրենց հակասություններն այլ յերկը-  
ների հետ, վորը նրանք, պատերազմից բացի, այլ կերպ վերաց-  
նելու հույս չունեն: Բայց այդ հակասությունները գեռ չեն հա-  
սել այնպիսի սրության, վոր պատերազմն այժմն յական համարվի:  
Սակայն պատերազմն անխուսափելի ու անվերանալի համարե-  
լով և, մյուս կողմից, շատ ել շահագրգուված չիննելով ընդհա-  
նուր խաղաղության պահպանությամբ, նրանք չեն կամ ենում  
իրենց ձեռքերը կապել և ըստ հնարավորության խուսափում  
են այն պարապաղորություններից, վորոնք, նրանց կարծիքով,  
ավելորդ տեղը կամրացնելին խաղաղությունը, ինչպես չհար-  
ձակվելու պակտերը, հարձակվող կողմի բնարուշումը և այլն:

Նրանք, թերեւս, ամենևին, դեմ չեյին լինի յերրորդ պետությունն-ների փոքր տուրուգմփոցին, վորի մեջ նրանք չներզրավվեյին և կարողանային վորոշ ոգուտ քաղեւ, մանավանդ յեթե այդպիսի տուրուգմփոցներից կարողանար տուժել մեր Միությունը:

Կան, վերջապես, այնպիսի բուրժուական պետություններ ել,—և նրանք քիչ չեն,— վորոնք շահազրպոված են սուտակա ժամանակամիջոցում չխախտելու խաղաղությունը և պատրաստ են իրենց քաղաքականությունն ուղղել այդ խաղաղությունը սլաշտպանելու կողմը: Յես չեմ խորանա այդ քաղաքականության շարժառիթների գնահատության մեջ, միայն արձանագրում եմ փաստը, վորը մեզ համար խիստ արժեքալոր ե:

Յես վերցրի, իհարկե, միայն հիմնական խմբավորումներն այն պետությունների, վորոնց պայքարը ներկայումս համակում է միջազգային թատերաբեմը: Այդ պայքարը հեշտ և նկատել բուլոր միջազգային յերեւութների մեջ, բոլոր կոնգրեսներում, կոնֆերանսներում, միջազգային կազմակերպություններում: Ազգերի լիգայում այդ պայքարն ամենից ավելի ռելիեֆ ձևեր և ընդունում կարելի յե ընդունել, սակայն, վոր Ազգերի լիգայում ասես հաղթանակում և այն հոսանքը, վորը շահագրգոված և պահպանելու խաղաղությունը, և դրանով, թերեւս, բացատրվում են այն խորը փոփոխությունները, վորոնք նշվեցին Լիգայի կազմում: Պայմանագրերի ռեվիվիան, զինաթափումը, սպառազինման լրացումը, չորսի պակտը, Լիգայի վերակազմությունը,— այդ ամենն իմ բնութագրած՝ պետությունների յերեք խմբավորումների պայքարի դրսեորումներն են ու ֆունկցիաները:

## ԽՍԴԱԴԱԹՅՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՄԵՐ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ Ե

Ահա ընկերներ, այն բարդ միջազգային պայմանները, վորոնց մեջ ստիպված և գործել խորհրդային դիվանագիտությունը: Մեր դիվանագիտության պատասխանատվությունը մեծ և ել ավելի մեծ և դասնուած, վորովհետեւ իմ հիշատակած բոլոր կամ զբեթե բոլոր միջազգային պրոբլեմները կպչում են կամ կարող են կպչել մեր Միության շահերին: Վերցնենք, որինակի համար, թեկուղ պայմանագրերի ռեվիվիան: Այս հարցը կարծես մեզ չե վերաբերում, վորովհետեւ մենք համապատասխան պայմանագրե-

բին չենք մասնակցել, չենք մասնակցել վոչ միայն ձեւականութեն, այլև բարոյապես: Մենք հավանություն չենք տվել նրանց: Այիլին, մենք չենք թաղցրել մեր համակրությունն այն ժողովուրդների հանդեպ, վորոնց վերաբերմամբ այդ պայմանագրերի մեջ բացահայտ անարդարություն եր գործված, ուստի մենք չե, վոք պիտք և առարկինք այդ պայմանագրերի ուղղիղիային, բայց, ինարկե, այն գեղքում միայն, յեթե այդ ուղղիղիան կարող և տեղի ունենալ խաղաղ ճանապարհով, կամավոր համաձայնությունների հիման վրա, կամ, յեթե, վերացնելով զոյություն ունեցող անարդարությունը, նա չի սահղում ուրիշ ու թերևս այլելի մեծ անարդարություն: Բայց իրականության մեջ հայանի յեն պայմանագրերի արդարացիւ ուղղիղիայի այնպիսի նախաղծեր, վորոնք նախատեսում են տուժած պետությունների տերիտորիալ ախորժակը բավարարել այնպիսի յերկրների հաշվին, ինչպես, որինակ, մերձբարիթյան յերկրները կամ նույնիսկ ԽՍՀՄ, վորոնք վերալի դաշնագրի հետ առնչություն չունեն և վոչ վոքի վոչ մի անարդարություն չեն պատճառել: Զգիտեմ, հոգենատուական, թէ այլ պատկերացում և դա բարոյականության և արդարության մասին, համենայն գեպս նա արիտկան ծագում չունի: (Մափանարուրյուններ): Բայց, անկախ նրա ծագումից, նման բարյականություն կիրառելիս հարկավոր կլինի զործ ունենալ մեր 170 միլիոնանոց պետության վողջ զորության հետ: (Մափանարուրյուններ): Համենայն գեպս, շնորհիվ այդպիսի նախաղծերի յերեան գալուն, մենք, հակառակ մեր կամքին, ներդրավվում ենք այսպիս կոչված պայմանագրերի ուղղիղիայի պրորեմի մեջ, վորով զգալի չափով բնորոշվում և մեր վերաբերմունքը նաև իմ հիշատակած մյուս միջազգային պրորեմների հանդեպ, ինչպես սպառապինման լրացումը, չորսի պակառը և այլն:

Մեր արտաքին քաղաքականության զեկավար թելը կապված ե ընկ. Ստալինի կարձ, բայց արտահայտիչ փորմուլայի հետ—մենք ուրիշի հողը չենք ուղում, բայց մեր հողից և վոչ մի վերջոկ ուրիշի չենք տա: (Մափանարուրյուններ): Թանի վորմենք չենք ուղում ուրիշի հողը, ուրեմն մենք չենք կարող պատերազմ ուղելու իսկ ինչ վերաբերում և մեր հողին, առա մենք լիտկատար հնարավորություն ունենք այդ հողը և նույնիսկ նրա մերձակայքը պաշտպանել մեր հզոր թափով աճող ուղմական ուժերով: (Մափանարուրյուններ): Այդ ուժերը կարող եյին մեր մոտիկ

կամ հեռավոր հարևաններից վորեւե մեկին դաս տալ՝ տասնյակ տարիներ գուըս չգալու իրենց սահմաններից: (Սափանարարյուններ): Բայց դա միջոցների և յեռանդի անարտազրական մախում կլիներ, մեզ միառժամանակ կլտրեր սոցիալիզմ կառուցելու մեր հիմնական խնդրից, և դրա համար մենք անում ենք այն տմենը, ինչ հնարավոր և մեր տերիտորիան խաղաղ միջոցներով պաշտպանելու համար, յեթե դա արմատական միջոց չի ել հանդիսանում մեզ սպառնացող ազրեսիան վերացնելու համար: Մենք յենթադրում ենք, վոր նույնիսկ անմիջապես մեր Միության սահմանների մոտ չսկսվող պատերազմուկան գործողությունները կարող են մեզ համար ահեղ վտանգ ստեղծել: Ահա թե ինչու մենք վոչ միայն շարունակում, այլև ուժեղացնում ենք մեր պայքարը խաղաղության համար, վորը կազմել և և կազմում ե մեր դիվանագիտության հիմնական ինդիբը: Ինչպես ճիշտ կերպով նշեց ընկ-Մոլոտովը, այդ պայքարը համապատասխանում և բոլոր յերկըրների ժողովրդական մասսաների ցանկություններին:

Մենք վերջին տարում ընդարձակեցինք իրար վրա չհարձակվելու պայմանների սիստեմը: Մենք այժմ ուժի մեջ մտած չհարձակվելու պայմանագրեր ունենք վոչ միայն մեր բոլոր հարեանների հետ, բացի Շապոնիայից և Զինաստանից, այլև Ֆլանսիայի և Խոտլիայի հետ: Մենք հետագա քայլն արինք իրար վրա չհարձակվելու պայմանագրերի նշանակությունն ու արդյունավետությունն ուժեղացնելու ուղղությամբ, առաջարկելով հարձակում հասկացողության սպառիչ բնորոշում: Մեր այդ առաջարկն արդեն մարմնավորվել և մեր հարևանների ամբողջ ՀՀԴ թայի հետ Ֆինլանդիայից մինչև Ավղանստան և Փոքր Անտանտայի յերեք յերկրների հետ կնքված համաձայնագրերով: Հարձակվող կողմի մեր տված բնորոշումն, ընդհանուրի խոստովանությամբ, արժեքավոր մուծում և հանդիսանում միջազգային իրավագիրության, ինչպես նաև միջազգային պրակտիկայի մեջ և միենալոյն ժամանակ ներկայացնում և հիմնալի մի յեղանակ ստուգելու ազրեսիվ նվաճողական ձգտութերի բացակայությունը կամ առկայությունը պետությունների մոտ: Այդ պատճառով և մենք կպայքարենք այդ բնորոշումն ընդհանուրի կողմից ճանաչել տալու համար:

# ՄԻՉԱՋԱՅԻՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԽՍՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐՄՊԱՆԴՄԱՆ ՀԱՎԱՐ

Խաղաղության ապահովումը չի կարող կախում ունենալ միայն մեր ջանքերից և պահանջում է մյուս պետությունների գործակցությունն ու ոժանդակությունը: Ուստի ձգտելով բարեկամական հարաբերություններ հաստատել ու պահպանել բոլոր պետությունների հետ, մենք հատուկ ուշադրություն ենք դարձնում մեր հարաբերություններն ամրացնելու և առավելագույն չափով մոտիկանալու այդ պետություններից նրանց հետ, վորոնք մեզ նման ապացույցներ են տալիս, վոր անկեղծորեն ձգտում են խաղաղություն պահպանելուն և պատրաստ են զիմանքերելու խաղաղությունը խախտողներին: Մենք յերբեք չենք հրաժարվել և չենք հրաժարվում միջազգային կազմակերպված գործակցությունից, վորի նպատակն և ամրապնդել խաղաղությունը: Դոկտրինայորներ չլինելով, մենք չենք հրաժարվում ողտագործելու այս կամ այն միջազգային միավորումներն ու կազմակերպված գործակցությունները, վորոնք զբյություն ունեն կամ կարող են կազմվել յեթե մենք հմատ կունենք կամ կունենանք հուսալու, վոր նրանք կծառայեն խաղաղության գործին:

Իմ ասածների լույսի տակ՝ գուք հեշտությամբ կհասկանաք, ընկերներ, առանձին յերկրների հետ մեր ունեցած հարաբերությունների զարգացման նշանակությունը:

## Մ Ի Ա Յ Յ Ա Լ Ն Ա Հ Ա Ն Կ Ն Ե Բ

Եւս կսկսեմ այն գեպքեց, վորը ժամանակազրական կարդով վերջինն և այդ զարգացման մեջ, բայց իր նշանակությամբ առաջին աեղերից մնին և զբագլում այնաեղ, այն և անդրատալանայան մեծ հանրապետության հետ հարաբերությունները վերականգնելուց: 15 տարի այդ հանրապետությունը, մեծ պետություններից միակը, համառորեն հրաժարվում էր վոչ միայն ճանաչելու ֆորմալ հարաբերությունները և որհըրդային Միության հետ, այլև ընդունելու նրա գոյությունը: Նա, այսպիսով, ձևականորեն չեր կամենում ընդունել Հոկտեմբերյան հեղափոխության փաստն ու մեր Միության սահմաններում նրա առաջացրած փոփոխությունները, և նրա համար տակավին շարունակում եր ինչ-վոր տեղ, առածությունից դուրս գոյություն

ունենալ կերենսկու ժամանակավոր կառավարությունը, վորք գործակալների հետ նա մինչև վերջին ժամանակներս պաշտպապես շարունակում եր հարաբերություններ ունենալ:

Նա համառում եր վոչ թե նրա համար, վոր պետական ավելի մեծ վեճեր ուներ մեզ հետ, քան մյուս յերկրները, կամ վոր նա մյուսներից ավելի շատ եր տուժել հեղափոխական որենսդրությունից: Վոչ, նա փաստորեն շարունակում եր Հռկտեմբերյան հեղափոխությունից հետո վողջ կապիտալիստական աշխարհի հայտարարած պայքարը պետության նոր, խորհրդային սիստեմը դեմ, վորն իրեն նպատակ եր առաջադրել սոցիալիստական հասարակություն ստեղծել: Դա պայքար եր յերկու սիստեմների խաղաղ գոյության դեմ: Նայելով, թե ինչպես այդ պայքարի նրա դիմակիցները, մյուս կապիտալիստական պետությունները միւմանց հետևից լքում եին ճակատը, Ամերիկան կարծես ասում եր նրանց—յիս ձեզ հասկանում եմ, դուք թույլ եք, դուք ջառաված եք, դուք մեծ զոհեր եք կրում, ուստի պետք ե թողնեք պայքարել, բայց յես բավականաշափ ուժեղ եմ, վորպեսզի մենակ շարունակեմ պայքարել բալորեղ փոխարեն: 15 տարի նա հաստատապես կանգնեց իր դիրքում, բայց վերջիվերջո այժմ դադարեցրեց պայքարը:

Ահա թե ինչու, ընկերներ, իմ և նախագահ Ռուզվելտի նոյնամբերի 16-ի նամակների փոխանակության մեջ պետք ե տեսնել վոչ պարզապես մեր ճանաչումը մեծ պետության կողմից, այլև վերջին դերքի, վերջին ամրոցի անկումը կապիտալիստական աշխարհի կողմից մեր դեմ սկսված այն հարձակման մեջ, վորը Հռկտեմբերից հետո չճանաչելու և բոյկոտի ձեւ ընդունել: Յեզ ինչքան յերկար եր դիմանում այդ ամրոցը և ինչքան ավելի մտածված ու գիտակցորեն եին դործում նրա պաշտպանները, այնքան ավելի մեծ պետք ե լինի մեր բավականությունն Ամերիկայի հետ հարաբերությունները վերականգնելուց: Իսկ դադարելով գործել իրեւ վողջ կապիտալիստական աշխարհի նախահարձակ և առաջին անգամ մեզ հետ շփման մեջ մտնելով, Ամերիկան իսկույն ևեթ համոզվեց, վոր ազգային կամ պետական առումով նրա և մեր միջև հակասություններ չկան, իսկ վիճելի հարցերը հեշտ լուծելի յեն: Ամելին, ինքը շահագրգռված ինելով խաղաղության պահպանման խնդրով, Ամերիկան մեր Միության հետ ունենալիք շփման մեջ տեսալ այդ խաղաղու-

թյան պահպանման հղոր դործոն և համապատասխան կերպով  
զնանատեց մեղ հետ այդ ուղղությամբ դործակցելը:

Մենք, մեր կողմից, նույնպես զնանատում ենք հարաբե-  
րությունների վերականգնումն Ամերիկայի հետ, առաջին հերթին  
այն նշանակության ահսակետից, վոր ունի այդ դեպքը խաղա-  
ղության դործի համար Զուգընթացարար կարող եմ նշել վոր  
այն հիմնական սկզբունքներն ու դրույթները, վորը մենք հետե-  
ղուականորեն կիրառել ենք կապիտալիստական յերկրների հետ  
հարաբերությունները վերականգնելիս, մեղ հաջողվեց այս դեպ-  
քում ես պահպանել լիակատար անաղարտությամբ: (Յափանա-  
րարյաններ): Այս հանդամանքը, այսինքն վորեն զոհորության  
բացակայությունը յերկու կողմից, քիչ չափով յերաշխիք չե հա-  
րաբերությունների հատագա խորացման համար Կարծիքների  
անկիղծ փոխանակությունը նախադան Ռուզվիլտի և իմ միջև  
մեղ յերկուսին համոզեց մեր յերկրների տանինասներու հարաբերու-  
թյունների բացարձակ հնարավորությանը: Պետք ե պատշաճ  
զնանատականը տալ նախադան Ռուզվիլտի խորաթափանցությա-  
նը, վոր նա իշխանության գլուխն անցնելով կարճ ժամանակից,  
թերև նախաքան այդ, համոզվեց, վոր ապարդյուն և հետագա  
պայքարը մեր զեմ հանուն կապիտալիզմի և վոր ուղարկար և  
հարաբերություն ունենալ մեղ հետ հանուն ամերիկան պետա-  
կան շահերի, միջազգային խաղաղության շահերի:

### Թ Յ Ա Ի Բ Ք Ի Ա.

Ուսարեկրյա պետությունների հետ ունեցած հարաբերու-  
թյունների ախտար ենք մենք մենք համարում մեր հարաբերություն-  
ները Թյուրքական մեծ հանրապետության հետ: Ավելի քան տա-  
սը տարվա ընթացքում այդ հարաբերությունները բարեկավելել  
են տարեցարի, հասնելով իսկական բարեկամության, լիակա-  
տար զոհացում տալով յերկու կողմերին և նրանց լիակատար  
անվանվության զգացմունք ներշնչելով նրանց միջև ընկնող  
սահմանադրի նկատմամբ: Բարեկամության և փոխազարձ վատա-  
հության քաղաքականությունը արդյունավետ համագործակցու-  
թյան հող և ստեղծում նաև միջազգային թատերաբեմում: Յու-  
րաքանչյուր կողմը խաղաղության ամրացման կողմն ուղղված  
առաջարկ ներկայացնելով, կարող և վաղորոք հույս ունենալ  
մյուս կողմի աջակցության ու ուանդակությանը:

Մենք ուրախ ենք, մասնավորապես, նշելու այն աջակցությունը, վորը մեզ ցույց տվեց Թյուրքիան և նրա արտաքին գործոց մինիստր Թեղիփիկ Ռյուշտի բեյը հարձակվող կողմի բնորոշումը միջազգային կյանքում կիրառելու ժամանակի. Մեր կառավարության կողմից ռազմածովային ժողովում ընկ. Վորոշիլովի գլխավորությամբ (ծափանարություններ) նոր հանրապետության տասնամյակի տառակատարությունը Թյուրքիա պատվիրակություն ուղարկելը և այն սրտագին, խանդավառ ընդունելությունը, վորը ցույց տվին նրան վոչ միայն հանրապետության պարագլուխն ու կառավարությունը, այլև ժողովուրդը, արտաքին նոր դրսերումը հանդիսացան այն խորը ներքին բարեկամության, վորի մասին յես խոսեցի հիմա:

Ես կարող եմ լոկ ցավ հայտնել, վոր Ամերիկա ուղևորվելու հետևանքով զրկվեցի այդ մանիֆեստացիային անձամբ մասնակցելու բավականությունից: Յեթե բոլոր ժողովուրդները կարողանային իրար հետ նման հարաբերություններ հաստատել, ապա խաղաղության պրոբլեմը լուծված կլիներ:

### Ֆ Բ Ա Ն Ս Ի Ա.

Խոսելով մյուս պետությունների հետ ունեցած հարաբերությունների աստիճանական զգալի բարելավման մասին, մենք պետք են նախ և առաջ հիշատակենք Թրանսիայի մասին: Իրար վրա չհարձակվելու պայմանագիրն ստորագրելուց հետո մեր հարաբերությունները Թրանսիայի հետ վերջին տարում արագորեն առաջ վնացին: Դրան նպաստում են ինչպես վորեւ պետական քաղաքական հակասությունների բացակայությունը մեր միջև, այնպես ել հատկապես մեր ընդհանուր ցանկությունն՝ ակտիվորեն աշխատելու ընդհանուր խաղաղության պահպանման ոգտին:

Մենք ունենք կառավարության մշտականության և արտաքին քաղաքականության մշտականության առավելությունը, այնինչ Թրանսիայում կառավարությունները հաճախ փոխվում են՝ քաղաքական որիենտացիայի հնարավոր փոփոխությամբ: Սակայն քանի վոր Քրօնաստվական, ժողովուրդն անկեղծորեն խաղաղություն և ցանկանում, իսկ այդ ցանկությունն ել հենց այն ե, ինչ մեզ միացնում ե Թրանսիայի հետ, մենք չպետք ե առանձնապես վտիս ունենանք, թե կառավարությունների փոփոխությունը կխանգարի մոտիկ հանրապետությունների հաջող զար-

պացմանը: (Յափանարություններ): Արերս ֆրանսական ժողովրդի ամենակարևորագույն և ցայտուն ներկայացուցիչներից մեկի, պարսն երրիոյի զալուստը մեր Միությունը, Երրիոյի, վորն արաւանայում և այդ ժողովրդի խաղաղասիրական տրամադրությունները, առան նրան հաջորդող՝ ֆրանսական ավիացիայի ներկայացուցիչների պաշտոնական այցելությունը մինխոտը պարոն Պիեռ Կոտի գլխավորությամբ, նոր զարկ տվին խորհրդային-ֆրանսական մերձեցմանը: Առավեմ եմ կարծել, վոր այս ամենը լոկ միջանկյալ ետապներ են մեր հանրապետությունների հետազա զա վերբնթաց զարգացման մեջ, և յիս հավատացած եմ, վոր այդ շարժումը կարագանա խաղաղությանն սպառնացող տարրերի կուտակման համեմատ:

Պետք և նշել, սակայն, վոր մեր հարաբերությունները մրանսիայի հետ կարիք ունեն վորոշ տնտեսական բազմիւ, վորը, հույս ունեմ, կատեղծիւ առևտրական համաձայնության առաջիւ կնքումով:

### Ի Տ Ա. Լ. Ի Ա.

Առանձին կայունությամբ շարունակում են աչքի ընկնել մեր հարաբերություններն Իտալիայի հետ: Տասը տարվա ընթացքում այդ հարաբերությունները վոչ մի տատանման, վնչ մի փորձության չեն յենթարկվել վճչ քաղաքական, վոչ ել տնտեսական բնագավառում: Մենք այդ ժամանակամիջոցում Իտալիայի դիվանագիտական արժեքալիր համապործակցության քիչ դեպքեր չենք ունեցել: Մենք նույնպես մեր շինարարության միքանի բնագավառներում ունեցել ենք Իտալիայի տեխնիկական գործակցությունը, զարգացել են նաև տնտեսական հարաբերությունները փոխազարձ ոգտի համար:

Իմ որերս կատարած այցելությունն Իտալիային և այնուղինձ ցույց տրված ընդունելությունը վկայում են այն մասին, վոր յերկու յերկրները ձգտում են հետազայում ևս զարգացնել իրենց փոխհարաբերությունները բոլոր բնագավառներում, և այդ յեղբակացությանը հանգեցինք մենք իտալական կառավարության զլուխ պ. Մուսոլինիի հետ ընդհանուր քաղաքականության հարցերի և ընդհանուր խաղաղության պահպանման լավագույն մեթոդների մասին կարծիքները փոխանակելուց հետո: Բուլոր խոշոր յերկրների հետ միաժամանակ հարաբերությունները

պահողանելու և զարգացնելու մեր ձգտումը փաքը մուծում չե  
ընդհանուր խաղաղության գործում:

### Մ Ե Ն Բ Բ Ի Տ Ա Ն Ի Ա

Մեր այդ ձգտումը, դժբախտաբար, տակավին չի իրագործվել  
կամ վոչ-լիովին ե իրադործվել մյուս խոշոր պետության՝ Մեծ Բրի-  
տանիայի նկատմամբ Մեր և նրա փոխարարերությունները, դըժ-  
բախտաբար, չեն կարող պարծենալ կայունությամբ և մշտականու-  
թյամբ: Դա ամենեւն արդյունք չի ինչ վոր որյենկտիվ պատճառների,  
և յես հավատացած եմ, վոր անգլիական ժողովուրդն ընդհանուր առ-  
մամբ ցանկանում ե լիակատար խաղաղության և բարեկամու-  
թյան մեջ լինել մեղ հետ, բայց այնուեղ տակավին կան այնպի-  
սի տարրեր, վորոնք գեռես խորասուզված են սոցիալիզմի յերկրի  
դիմ մղելիք կապիտալիստական այն ընդհանուր պայքարի յերա-  
զանքի մեջ, վորքից հենց նոր հրաժարվեց Ամերիկան: Խրանք չեն  
կարող վոչ միայն վոչնչացնել, այլև թուլացնել սոցիալիզմի յեր-  
կիրը և այդ պատճառով անգլիացիների բոլորին հայտնի գործնակա-  
նությամբ և վողջախոհությամբ հանդերձ՝ մնում ե դարմանալ, վոր  
նրանց մեջ տակավին կան այդպիսի դոնքիշուտացող սնայպեր-  
ներ և պարտիզաններ: (Միծաղ, ծափահարություններ): Խնչքան վոր  
մեղանից և կախված, մենք պատրաստ ենք և կկամմենանք նույն-  
պիսի լավ հարաբերություններ ունենալ Մեծ Բրիտանիայի հետ,  
ինչպիսին ունենք մյուս յերկրների հետ:

Մենք մեզ հաշիվ ենք տալիս այն բանում, վոր անկեղծ և  
լավ հարաբերությունները խոշոր պետությունների միջև ընդհա-  
նուր խաղաղության վոչ միայն անհրաժեշտ պայմանը, այլև  
յերաշխիքն են հանդիսանում: Մոռակա ժամանակում սպասվում ե  
ժամանակավոր առևտուրական համաձայնության ստորագրումը, վո-  
րը վերացնելով միքանի թյուրիմացությունները, հույս ունենք,  
հարաբերությունների ավելի լավ հարաբերությունները մեր և Մեծ  
Բրիտանիայի միջև:

### Լ Ե Հ Ա Ս Ա Ն

Ամենից ավելի բուքջ ուշադրություն ենք մենք դաշձնում,  
իհարկե, մեր ամենամոտիկ հարևանների, հատկապես նրանցից  
խոշորագույնի՝ Լեհաստանի հետ ունեցած հարաբերություններ-

ըմբու Այստեղ ևս մենք կարող ենք դդալի առաջադիմություն նշել իրար վրա չնարձակվելու պայմանագրի կնքումը և հարձակվող կողմը բնորոշող կրոնվիճաները չեյին կարող չուժեղացնել փոխադարձ վասահությունն ու փոխադարձարար իրար համանալը վերջին տարրում Յեկրտայում տեղի ունեցած քաղաքական տակնութբայություններն ստեղծել են ընդհանուր վասանդից, ընդհանուր հոգսերից բզիսող շահների ընդհանրությունների մենք և Ենթաստանն ինքներս չպատակեցինք այդ հոգսերի ընդհանրությունը, ապա այդ մեղ թելադրում են նրանք, ովքեր այդ հոգսերը պատճառում են (Ծախանարարյուններ):

Մնդիանուր հոգսերը և ընդհանուր վտանգները պիտություններն իրար շաղկապաղ լավագույն ցեմենտն են հանդիսանում: Մեղ առանձնապիս ուրախացնում են այն տեղաշարժերը, վոր մենք նկատում ենք լինական հասարակայնության վերաբերությունիքի մեջ մեր Միության նկատմամբ, և այդ տեղաշարժերը վկայում են այն մասին, վոր լինական հասարակայնության լայն շրջանները ևս հնադիմանք դալիս են այն համոզմանը, վորը մենք ունեցել ենք վաղուց, թե հարեան Թորհրդային Միության և Ենթաստանի միջն հնարավոր և ու պետք և լինի սկրտ համապարծակցություն և թե նրա դարդացմանը խռչնդուա հանդիսացող վոչ մի որյանելուի պատճառ չկա:

Այդ համոզումից և բջիսում կուլտուրական մերձեցման պահանջը, և անցած տարին այդ մերձեցման քիչ գրակորումների վկան չեղավ:

### ՄԵՐԶԲԱԼԹՅԱՆ ՅԵՐԱԲՆԵՐ

Այս, ինչ յես տառացի այն նշանակության մասին, վոր ունեն իրար վրա չնորդակեցնելու պայմանագրերը և հարձակվող կողմի ընորոշումը Ենթաստանի հետ մեր ունեցած հարաբերությունների համար, կարելի յէ ասել նաև մեղ մոտիկ մյուս որևէմոյան յերկրների՝ Ֆինլանդիայի, Նոունիայի, Լատվիայի և Լիտվայի նկատմամբ, վորոնք սատրագել են հիշյալ համաձայնությունները: Այդ յերկրները գնալով ավելի ու ավելի յեն համոզվում մեր քացարձակ խաղաղութիւրությանը, նրանց հանդել բարյացակամ, նրանց տնտեսական և քաղաքական լիտկատար անկախության պահպանման խնդրով շահագրգություններ:

Բայց մենք վոչ միայն շահագրգուված, այլև մտահոգված ենք դրանով։ Մենք հետևում ենք վոչ միայն այն յերևույթներին, վորոնք այդ յերկրների համար արտաքին վտանգ են ներքին պայմանում, այլև քաղաքական այն ներքին պրոցեսների զարդացմանը, վորոնք կարող են նպաստել անկախությունը կողմանելուն կամ նրա թուլացմանը։ Խատվիայի հետ մենք վերջերս առևտրական նոր պայմանադրը կնքեցինք, իսկ եստոնիայի հետ նորոգեցինք անցյալ տարվա տնտեսական համաձայնությունը, վորը, հույս ունենք, նույնպես կնպաստի այդ հարկանիների հետ մեր ունեցած փոխհարաբերությունների կայունությանը։

### ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ՅԵՎ ԱՎՂԱՆՍՏԱՆ

Հարձակվող կողմը բնորոշող լոնդոնյան կոնվենցիային միացան նաև մեր արևելյան հարկանները։ Պարսկաստանը և Ավղանստանը, վորոնց հետ և մենք կապված ենք իրար վրա չհարձակվելու պայմանագրերով։ Ժողկոմի տնօտակալ ընկ. Կարախանի ուղևորությունը։ Պարսկաստան և նրան ցույց տրված խիստ սլբատագին ընդունելությունը հնարավորություն ավին նորից ստուգել մեր փոխհարաբերությունները Պարսկաստանի հետ և հաստատել նրանց անփոփոխ բարեկամական բնույթը։

### Փ Ո Ք Բ Ա Ն Տ Ա Ն Տ Ա

Մենք լոնդոնում հարձակվող կողմը բնորոշող կոնվենցիան ստորագրեցինք նաև Փոքր Անտանտայի յերկ յերկրների հետ, թեև մենք նրանց հետ տակալին նորմալ հարաբերություններ չունենք։ Այս հանդամանքը, վոր այդ ակտը կատարվեց չնոյած այն բանին, վոր այդ յերկրներից մեզի՝ Ռումինիայի հետ գնուհս չեն լուծված են վեճերը, —լոկ մեծացնում և նրա նշանակությունը։ Այդ ակտն անկասկած նրա բոլոր մասնակիցների միքանի շահերի ընդհանրության արտահայտիչն և հանդիսանում, իսկ այդ շահերի եյությունն այն ե, վոր նրանք ընդհանուր ձըդառում ունեն խաղաղեցնելու Ցելյուպան։ Շահերի այդպիսի ընդհանրությունը բավարար բազա յե հանդիսանում և հնարավորություններ ե բաց անում հետագա մերձեցման համար, առանց վորի լոնդոնի կոնվենցիան չի կարող տալ իր լիակատար եֆեկտը։

Նորմալ կերպով պահպանվել և զարգացել են մեր հարաբերությունները մյուս յերկրների հետ—Շվեդիայի, վորի հետ նոռանոր տնտեսական կապեր են ստեղծվել, Դանիայի, Նորվեգիայի, Ավստրիայի և Հունաստանի հետ Մենքուրախությամբ ընդունեցինք Աւրուդվայի առաջտրկը դիվանագիտական հարաբերությունների՝ դեռ միքանի տարի առաջ վորոշված վերականգնումը փաստորին իրադրութելու մասին։ Աւրուդվայի դեսպանն արդեն ԽՍՀՄ-ի Հանագարենին և գանգում, և մենք նույնպես միջոցներ ենք ձեռք տնօւմ լիազոր ներկայացուցիչ ուղարկելու Աւրուդվայ։ Իսպանիայի հետ հարաբերությունների վերանորոգման մասին նշեց արգեն ընկեր Մոլոտովը։

Ի մեծ վիշտ մեզ, Իսպանիայի մեր առաջին զեսպան Ա. Վ. Լունաչարսկուն, վորը պատրաստվում եր մեծ աշխատանք կատարել մեր և իսպանական ժողովրդի կուլտուրական մերձեցման ուղղությամբ, վիճակված չեր կատարելու իր պարտականությունները։ Դեռ մեկ ամիս առաջ, արդեն զատապարտված, բայց չգիտակցելով իր հիվանդության լրջությունը, Անատոլի Վասիլյեվիչն իրին հատուկ հափշտակությամբ իմ առաջ զարգացնում եր այդ մերձեցման ուղղությամբ իր կատարելիք աշխատանքի լայն ոլանները։

Այդ պատճառով մեզ համար առանձնապես զգալի յե այն կորուսաը, վորը մենք կրում ենք ընկե. Լունաչարսկու մահավ, հանձին վորի մենք զրկվեցինք մեծ և աազանզավոր աշխատողից։ Յես կարծում եմ, վոր այդ կորուսան զգալի յե նաև մեր վորջ Միության համար, և առաջարկում եմ Կենտղործկումին հոսնելայս հարգել նրա հիշատակը։ (Բոլոր վասի յեն կանգնառ)։

## Զ Ի Ն Ա Ս Ա Ն

Մեծ գոհունակությամբ նշում եմ, վոր մի տարի առաջ ամբողջապես վերականգնեցին դիվանագիտական նորմալ հարաբերությունները մեր և Զինական մեծ հանրապետության միջև։ Մենք ընդունեցինք չինական կառավարության առաջարկն իրար վրա չհարձակելու պայմանագիր կնքելու մասին, վորի նախադիմք մեր կողմից ներկայացված և քննարկվում և չինական կառավարության կողմից։ Դժբախտաբար Զինաստանը տակալին

ստիպված և տուժել ինչպես արտաքին թշնամու արշավանքից՝  
այնպես ել ներքին խորը յերկպառակլություններից։ Խստիվ հետեւ  
տեղով Զինաստանի ներքին գործերին չմիջամտելու քաղաքաւ  
կանությանը, մենք մեծագույն համակրանքով կհետեւնք անկախության և ազգային միավորման համար նրա մղած պաքարին։

Տալով արտաքին աշխարհի հետ մեր ունեցած հարաբերությունների տեսությունը, յես ամենեկն աչքաթող չեմ անում այնպիսի խոշոր պետությունները, ինչպես Գերմանիան և Շապոնիան։ Յես իմ տեսության մեջ նրանց առանձին տեղ եմ հաստկացնում հենց այն պատճառով, վոր նրանք շատ մեծ տեղ ին դրավում Խորհրդային Միության արտաքին քաղաքականության մեջ։ Այդ յերկու յերկրների հարաբերությունների դարպայման վերջին փուլը թույլ ե տալիս հուսալու, վոր նրանք ինձնից պահանջներ չեն անի այն բանի համար, վոր յես նրանց ընդհանուր փակագծից դուրս եմ թողնում։ Յեթե չեմ սխալում, նրանք արդեն ճանաչել են իրենց միջն ցեղային ընդհանրություն։ (Միծաղ, ծափանարուրյաններ)։ Այդ միանգամայն հնարավոր դարձավ այն ժամանակից, յերբ Եեղը դադարեց ազգաբանական մարդաբանական հասկացողություն լինելուց և դարձավ ինչ-վոր մի տեսակ մարդական կազմակերպության անուն։ (Միծաղ, ծափանարուրյաններ)։

## ԽՈՐՀԻԿԱՆԱԿԱՆ ՀԱՐՍԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տասը տարի մեղ Գերմանիայի հետ կապում եյին տնտեսական և քաղաքական սերտ հարաբերություններ։ Մենք միակ խոշոր յերկիրն եյինք, վոր չեյինք ցանկանում վոչ մի առնչություն ունենալ Վերավիդ դաշնագրի և նրա հետեւանքների հետ։ Մենք հրաժարվեցինք այն իրավունքներից և ողուտներից, վորն այդ դաշնագիրը նախատեսում եր մեղ համար։ Գերմանիան առաջին տեղը գրավեց մեր արտաքին առեւտրի մեջ։

Հաստատված քաղաքական և անտեսական հարաբերություններից չափաղանց մեծ ոգուաներ եյինք քաղում թե մենք և թե Գերմանիան։ (Կալինին—Մանավանդ Գերմանիան)։ Հենվելով այդ հարաբերությունների վրա, Գերմանիան կարող եր ավելի համարձակ և ավելի վստահորեն խոսել իր յերեկվա հաղթողների հետ։ Նրան հաջողվեց աղատվել Վերսալի միքանի ամենից ավելի

ծանր հետեւանքներից: Նա մերձեցում եր փնտռում յերեկվա բուլը հաղթողների հետ, թեև այդ նրան վոչ միշտ եր հաջողվում: Նա Թրանսխայի հետ կնքեց Լոկատոնոյի դաշնագիրը, փորը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ չնարձակվելու պայմանագիր և նույնիսկ ավելի, քանի վոր այնտեղ կան կողմանակի հանձնաբարողներ: Նա նույն Լոկատոնոյում Լեհաստանի հետ կնքեց արքիտրաժ պայմանագիր, փորը նույնպես վոչ այլ ինչ ե, յեթե վոչ չնարձակվելու պայմանագիր: Գերմանիան մտավ Ազգերի լիգան, ընդունելով նրա պայմանագիրը, փորը նույնպես չնարձակվելու պայմանագիր ե և միաժամանակ սանկցիաներ և նախատեսում:

Մենք, մեր կողմից, հնոց վոր այդ հնարավոր դարձավ, նույնպես չնարձակվելու պայմանագիր կնքեցինք Թրանսխայի և Լեհաստանի հետ Այդ համաձայնություններն ու պայմանագրերը յերկու կողմից ամենեին չպետք ե վատթարացնելին և չվատթարացրին մեր հարարերությունները Գերմանիայի հետ, վորոնք ամենեին հիմնված չեցին թշնամանքի վրա՝ յերբորդ յերկրների նկատմամբ: Այնուամենայնիվ մեր փոխհարաբերությունները Գերմանիայի հետ վերջին տարում, կարելի յետեւ, անձանաչելի դարձան: Գերմանիայում տեղի ունեցան այնպիսի յելույթներ, հայտարարություններ, գործողաւթյուններ, վորոնք վոչ միայն չեցին համապատասխանում մեր նախկին հարարերություններին, այլ ավելի շուտ առիթ ելին տալիս կարծերու, թե այդ հարարերություններն իրենց հակազրությանն ելին վերածվել եւոկ դրա պատճառները հետեւյաներն ելին: Գերմանիայում կառավարությունների այն փոփոխման հետեւանքով, վոր տեղի ունեցավ 1932 թվին, իշխանության դրույթը, իսկ հետո նույնիսկ կառավարման զեկի մաս անցավ քաղաքական մի գործիչ, վորը Գերմանիայի հետ մեր ունեցած լավագույն հարարերությունների ժամանակ բացահայտութեն գևմ եր գուրա զալիս այդ հարարերություններին, քարոզելով մերձենալ Արևմուտքի հետ՝ Խորհրդագոյին Միության վրա ընդհանուր հարձակում գործելու համար: Նա ստեղծել եր քաղաքական մի ակումբ, վորակից քարոզում ելին այդ զաղափարը, և նա անձամբ շատ ու յեռանդադին աշխատում եր նրա իրազորձման ուղղությամբ: Իշխանության զլուխն անցնելով, նա փորձ արեց, միշտ ե, անհաջող, ձևականութեն իրազորձել այդ զաղափարը:

Այնուհետեւ Գերմանիայում հեղաշրջում կատարվեց, վորն իշ-

իսանության գլուխը նստեցրեց մի նոր կուսակցություն, վորն ամենածայրահեղ հակախորհրդային գաղափարներ եր քարողում։ Այդ կուսակցության հիմնադիրը գրական յերկում մանրամասնորեն զարգացրել և Գերմանիայի արտաքին քաղաքականության իր կոնցեպցիան։ Հստ այդ կոնցեպցիայի, Գերմանիան պետք ե նվաճել միայն բոլոր այն տերիտորիաները, վորոնք նրանից անջատվել են Վերսալի դաշնագրի համաձայն, վոչ միայն նվաճի այն հոգերը, վորտեղ ընդհանրապես գերմանական փոքրամասնություն կա, այլև հրով ու սրով ճանապարհ հարթի գեղի Արևելք ընդարձակվելու համար, կանդ չառնելով Խորհրդային Միության սահմանների առաջ և ստրկացնելով Միության ժողովուրդներին։

Այդ կուսակցության մի ուրիշ ականավոր գործիչ, նախկին սուսահպատակ, վոչ միայն քարողում եր այդ նույն գաղափարները, այլև կուսակցության հանձնարարությամբ և նրա անունից հարարերությունների մեջ եր մտնում ու սերտ շիփում պահպանում ուստական, առավելապես ուկրայնական հականեղափական կազմակերպությունների հետ։

Բայց, թերևս այդ մարդիկ, իշխանության գլուխն անցնելով, պատասխանատու պաստեր զբավելով, հրաժարվեցին այդ կոնցեպցիայից։ Մենք հիանալի հասկանում ենք գոկարինայի և քաղաքականության տարրերությունը կասկածալիստական յերկրներում։ Պատահում ե, վոր ոպողիցին կուսակցությունն իշխանության գլուխն անցնելով՝ աշխատում ե մոռանալ այն լոզունգները, վորը նա առաջ նետել ե քաղաքական հակառակորդների դիմ պայքարելիս։ Բայց տվյալ դհափում այդ տեղի չունեցավ։ Մեղ, առնվազն, հայտնի չե վոչ մի պատասխանատու հայտարարություն, վորն ամբողջապես ջնջելիս լիներ իմ հիշատակած կոնցեպցիան։ Այն գրական յերկը, վորի մեջ քարողվում ե այդ կոնցեպցիան, առանց վորևէ բան հանելու նոր հրատարակություններից, շարունակում ե շրջել Գերմանիայում, ներառյալ նաև այն հրատարակություննը, վորը կրում ե 1934 թվականը։ (Միծառ)։ Նույն կոնցեպցիան այժմ ել բացահայտորեն քննարկվում ե գերմանական մամուլի հջերում։

Ընդամենը կես տարի առաջ Լոնդոնի միջազդային կոնֆերանսում գերմանական կարինետի անդամը հուշագրի մեջ շարադրեց Արևելքի նվաճման նույն գաղափարը։ Ցիշտ ե, նա հերքվեց, և մենք իրավունք չունենք քննելու և այլս չենք քննի այդ

հուշադիրը վորպես պաշտոնական փաստաթուղթ, բայց մինիստրի ժխտումը չի վոչնչացնում հուշադիրը ներկայացնելու բուն փաստը, վորը ցույց է տալիս, վոր այդ փաստաթղթում շարադրված դադափարները տակավին թափառում են նույնիսկ կառավարական շրջաններում։ Վոչ պետական, բայց և այնպես խիստ պատասխանատու պոստեր գրավող անձնավորությունների կողմից քիչ չեն յեղել դադափարների նույն շրջանակից բղխող հակախորհրդային բանակցություններ և առաջարկներ։ Մենք ինչորմացիս ունենք նաև այդ տիպի պաշտոնական առաջարկների մտածին։

Մենք չենք կարող պնդել, թե այդ ամբողջ ինֆորմացիան բացարձակապես համապատասխանում է իրականությանը, բայց այն միանդամայն անտեսել նույնութեանք չենք կարող, վրովինուեած ենք ազգային բանական ազրյութեանքից—և այնպիսի ազրյութեանքից, վորոնք ամեննեին շահազդրոված չեն վիճացնելու մեր հարաբերությունները Գերմանիայի հետ Մանրամասնկանությունը մեր հարաբերությունները թունավորող այնպիսի կայտիալայի վրա, յերբ ամեն տեսակ գերմանական իշխանությունները սիստեմատիկ կերպով հալածանքի յեն յենթարկում խորհրդային ճիմսարքներն ու խորհրդային քաղաքացիներին վոչ թե վորեն արարքի համար, այլ միայն այն պատճառով, վոր նրանք խորհրդային են,—մի պրակտիկա, վորը մի ժամանակ հարկազրեց Յեկալինի մեր լիազոր ներկայացուցչությանն անցնելու բողոքի նոտանների մասսայական արտադրության։ Այդ պրակտիկան այժմ կարծես դադարել ե, և հույս ունենք, չի վերսկսվի։ Անո թե ինչն ե, վոր անձանաչելի յե դարձրել մեր նախկին հարաբերությունները Գերմանիայի հետ։

Ես հարկ համարեցի այդ ասել բացահայտ կերպով, վորովինակ գերմանական կողմից հաճախ փորձեր են արվում մեր վերազրել հարաբերությունների փոփոխման նախաձեռնությունը և այն բացատրել մեր զմբունությամբ՝ գերմանական ներկա ռեժիմից, կոմունիստաների հալածանքից և այն։ Մենք, իհարկե, մեր կարծիքն ունենք գերմանական ռեժիմի մասին, մենք, իհարկե, զգայուն ենք մեր գերմանական ընկերների տանջանքների նկատմամբ, բայց մեղմ արքսիստներիս ամենից քիչ կարելի յե կշտամբել այն բանում, թե մենք թույլ ենք տալիս, վոր զգացմունքը տիրապեսի մեր քաղաքականության վրա։ (Մատիահարություններ)։

Ամբողջ աշխարհը գիտե, վոր մենք կմրող ենք պահպանել և պահպանում ենք լավ հարաբերություններ կապիտալիստական պետությունների հետ վորեւ ոեժիմի պայմաններում, ներառյալ նաև ֆաշիստական ոեժիմը: Բայց բանն այդ չե: Մենք չենք խառնըլում Գերմանիայի, ինչպես նաև մյուս յերկրների ներքին գործերին, և մեր հարաբերությունները նրա հետ վորոշվում են նրա վոչ թե ներքին, այլ արտաքին քաղաքականությամբ:

Այդ թեմայի շուրջը խոսակցելիս գերմանացիները հաճախ մեզ մատնանշում են գերմանական կառավարության պաշտոնական բարձր ներկայացուցիչների արած այն գեկլարացիաները, թե նրանք ցանկություն ունեն լավ հարաբերություններ պահպանելու մեզ հետ, և հարց են տալիս—միթե դուք չեք կարող հավատալ այդ գեկլարացիաներին: Մենք պատասխանում ենք, վոր մենք, իհարկե, չենք կարող հաշվի չառնել այդ պաշտոնական գեկլարացիաները, բայց վոր միենույն ժամանակ չենք կարող անտեսել նաև այն յելույթներն ու փաստերը, վորոնք հակասում են այդ գեկլարացիաներին, վորովհետև այդ յելույթներն ու փաստերն արգեն խիստ շատ են: Յեթե նույնիսկ նրանց վերաբերյալ ինֆորմացիաների չնչին մասը ճիշտ լինի, ապա այդ ելքավական ե, վորպեսզի մենք զգուշանանք և ձեռք առնենք մեր հակամիջոցները:

Ինձ հարց են տալիս գերմանական կառավարության ներկայացուցիչները, թե մենք, իսկապես ասած, ի՞նչ ենք ուղղում Գերմանիայից և նա ի՞նչ պետք է անի, վորպեսզի մենք կասկած չունենանք նրա լոյալության վերաբերյալ: Յես դրան սովորաբար պատասխանում եմ—թող չանի այն, ինչ անում է (ծիծառ, ծափանարարյուններ), թող գերմանական կառավարությունը նայի, թե ի՞նչ են անում նրա բազմաթիվ գործակալներն ու եմիսարները, և թող նա ասի նրանց, վոր չանեն այդ: Բայց մենք հայտարարում ենք նաև հետեւալը— մենք ուղղում ենք ինչպես մյուս պետությունների, այնպես ել Գերմանիայի հետ լավագույն հարաբերություններ ունենալ: Ոգուտից բացի, թե Խորհրդային Միությունը և թե Գերմանիան այդպիսի հարաբերություններից այլ բան չեն ստանա:

Մենք մեր կողմից չենք ձգտում ընդարձակվելու վոչ գեպի Արևմուտք, վոչ գեպի Արևելք, վոչ ել մյուս ուղղություններով: Մենք վոչ մի թշնամանք չենք տածում գերմանական ժողովրդի

Նկատմամբ և վոտնձգություններ չենք անի վոչ նրա տերիտորիայի, վոչ ել նրա իրավունքների հանդեպ, և ինչ ել վոր անհելիս լինենք, յերբեք մյուս պետություններին ևս չենք խրախուսի այդպիսի վոտնձգությունների համար:

Մենք կկամենայինք, վոր Գերմանիան կարողանար մեզ անել նույն բանը և վոր չինեցին այնպիսի փաստեր, վորոնք հակասեցին զրան, և վոր մենք հավատացած լինեցինք, վոր այդ զեկուացիաները մերարերում են վոչ միայն ներկա ժամանակին, այլև այն ժամանակին, յերբ նա ավելի մեծ ուժ կունենա իրազործելու այն ազրեսիվ գաղափարները, վորը նրա այժմվա զեկավարները քարոզում եյին նախքան իշխանության գլուխն անցնելը, իսկ նրանցից վոմանք քարոզում են նաև այժմ:

#### ԴՐՈՒՅՑՈՒԽԵՐ ՀԵՅԱՎԵՐ ԱՐԵՎԵԼՔՐՈՒՄ

Յես չեմ սխարդի, ընկերներ, յեթե հայտնիմ այն յենթա դրությունը, վոր Զեզ ներկայումս ամենից ավելի հետաքրքրում են մեր հարաբերությունները Շաղոնիայի հետ: Այդ հարաբերություններն իրենց վրա յեն զամում վոչ միայն մեր Միության, այլև ամրող աշխարհի ուշազրությունը, վորովհետև Շաղոնիայի քաղաքականությունն այժմ ամենամթին փոթորկարեր ամողն և հանդիսանում միջազգային քաղաքական հորիզոնում:

Յես ինձ թույլ կտամ համառոտակի կանգ առնել Շատու նիայի հետ մեր ունեցած հարաբերությունների վրա: Պեկինի համաձայնությունը կնքելու ժամանակից մինչև 1931 թվի վերջը մեր և Շաղոնիայի միջև զոյություն ունեցին բարի գրացիական լավագույն հարաբերություններ: Զկոր վոչ մի կոռովիլիկա, վոչ մի խոշոր թյուրիմացություն, իսկ յեթե այդպիսիք ծաղում եյին, ապա լուծվում եյին զիվանազիտական խաղաղ ճանապարհով: Զկոր վոչ մի խոսակցություն սպառնալիքների մասին մեկ կամ մյուս կողմից: Մենք այնքան հավատ եյինք ընծայում Շատունիային, քանի վոր նա այն ժամանակ անվասանության առիթ չեր տալիս, վոր մեր հետավորարեկյան սահմանադրուխը դրեթե առանց պաշտպանության եյինք թողել:

Դրությունն սկսեց փոխվել այն ժամանակից, յերբ Շատունիան սկսեց իր սպազմական ոպերացիաները Մանչուրիայում: Ամրող աշխարհի հետ միասին մենք չեյինք կարող այդ ոպերացիա-

ների մեջ չտեսնել այն բաղմաթիվ պարտավորությունների խախտումը ձապոնիայի կողմից, վորը նա կամովին վերցրել եր միջազգային պայմանագրերի հետևանքով: Ձապոնական կառավարությունը, ինչպես հիշում եք, այն ժամանակ այնպիսի բացատրություն եր տալիս այդ ոպերացիաներին, վորը վոչինչ չեր բացատրում և վոչ վոքի չեր համոզում: Նա որա հետ միասին մեղ պաշտոնապես հավատացնում եր, թե իր զորքերը վորոշակի գծից դինը չեն անցնի Մանջուրիայում և թե, համենայն դեպս, մեր շահերը, մասնավորապես Չին-արևելյան յերկաթուղու շահերը, վոչ մի դեպքում չեն տուժի: Այդ հավատիացությունները մեղ հետագայում կը ըկին անգամ արվեցին՝ ինչ չափով վոր ճապոնական զորքերն առաջ եյին շարժվում, մինչև վողջ Մանջուրիայի դրավումը և այսպիս կոչված Մանջուրուկոյի ստեղծումը: Այդ գործողությունները, ինչպես հայտնի յե Ձեզ, ամբողջ աշխարհի, այդ թվում նաև Ազգերի լիգայի կողմից, վորին պատկանում եր ինքը ձապոնիան, բնութաղրվեցին իրու այնպիսի համաձայնությունների խախտում, ինչպես Վաշինգտոնի իննի պայմանագիրը, Ազգերի լիգայի պակաս և կելլոդի պակաս:

Մանջուրիայի գրավումը, սակայն, խախտումը հանդիսացավ նաև Պեկինի համաձայնությամբ հաստատված Պորտոմուտի պայմանագրի, ըստ վորի ձապոնիան իրավունք չունի վորոշնվազագույն չափոց ավելի զորք պահել Մանջուրիայում: Մենք խուսափեցինք մասնակցելու այն ժամանակ ճեռարկված ու նշված միջազգային ակցիաներին, նախ նրա համար, վոր չենք հավատում այդ ակցիաներին մասնակցող պետությունների անկենդությանն ու հետևողականությանը, իսկ զիստավորապես նրա հոմար, վոր չեյինք փնտում զինված կոնֆլիկտ ձապոնիայի հետ:

Մենք ձգուում եյինք, վոր ձապոնիան ուահպանի միայն մեր առևտրական շահերը Չին-արևելյան յերկաթուղում, վորով հետև Մանջուրիայում այլ շահեր չունեյինք: Հակառակ բոլոր հանդիսավոր խոսառություններին և հավատիացություններին, ձապոնիայի ներկայացուցիչները Մանջուրիայում շուտով, սակայն, ուղղակի հարձակում սկսեցին այդ շահերի դեմ, աշխատելով միանգամայն անհնար դարձնել Չին-արևելյան յերկաթուղու՝ համաձայնություններով նախատեսված համատեղ կառավարումը չինացիների կամ մանջուրացիների հետ, վիթեցնելով յերկաթզծի աշխատանքը, այդ նպատակով դիմելով պրովոկացիոն բռնի գործա-

պությունների և վարչության խորհրդային մասին առաջադրելով  
ճիշնդամայն չիմեալորված, կամայական պահանջներ:

Ամբողջ աշխարհը զարմանում եր մեր պաղարյունության և  
համբերության վրա, բայց մենք հաստատապես վորոշել եյինք  
չխախաել խաղաղության մեր քաղաքականությունը, ձեռնպահ  
մեալով ամեն մի թշնամական գործողությունից, բավականա-  
նալով լոկ բողոքներով, վորոնք, սակայն, մնում եյին առանց վոր-  
են ենիկախի: Բայց ինչքան ավելի հանդիսա ու համբերող եյինք  
մենք, այնքան ավելի լավիրողեն ու պրովոկացիոն կերպով սկսե-  
ցին հանդես գալ հապոնական իշխանությունները Մանջուրիա-  
յում: Առեղծից վորոշակի ապավորություն, վոր նրանք դիտակ-  
ցարար մեզ զրդում են ավելի ուժեղ գործողությունների, քան  
բողոքները:

Չցանկանալով յենթարկվել այդ պրովոկացիային, մենք  
դիո սույն թվի մայիսի 2-ին ձապոնիային առաջարկեցինք մեղ-  
նից գնել Չին-արևելյան յերկաթուղին: Ամբողջ յերկաթուղին, և՝  
դիօք, և շարժական կազմը, և կայարանների շենքերը, և դժի-  
մյուս պարագաները կառուցվել եյին մեր Միության ժողովուրդ-  
ների արյան-քրտինքով գատած փողերով, կազմելով, այդպիսով,  
նրանց անբաժանելի սեփականությունը Մենք միայն մեկ բան  
եյինք ուզում—դժի ներկա արժեքը վերադարձնել նրա իսկական  
տերերին: ձապոնիան կարծես թե ընդունեց գիծը գնելու մեր ա-  
ռաջարիլ:

Սակայն, յերբ մենք անցանք վաճառման պայմանների վե-  
րաբերյալ կոնկրետ բանակցություններին, պարզվեց, վոր ձա-  
պոնիան չի ցանկանում գնել դիօք, այլ ուզում և նվիր սահմար-  
եա առաջարկեց չնչին, ծիծաղելի գումար, միամտարար յենթա-  
դրելով, թե մենք դիօք վաճառում ենք լոկ ձեր համար, իսկ իրա-  
կանության մեջ պատրաստ ենք ձբիաբար տալու: Այդպիսի բա-  
նակցություններն, ինարկե, վոչ մի կոնկրետ բանի հանդել չե-  
յին կարող, թեև մենք դժի համար նվազագույն դումարն եյինք  
տառաջարկել:

Ճապոնիայի ներկայաց ուղիչներն այն ժամանակ սկսեցին  
բանավոր արդումնաների վիխարեն բռունցքի արդումնաներ  
տառաջարկել նրանք սկսեցին բռնի գործողությունների գիմել  
դժի մեր գործակալներին հեռացնելու և իրենց՝ մանջուրական  
կամ ուստական սպիտակ-գվարդիական արքանյակներով վիխա-

ըինելու համար, այլ կերպ ասած՝ նրանք դիմեցին գծի հափշշառակման յուրատեսակ յեղանակի։ Մենք հայտարարեցինք, վորչենք կարող բանակցությունները շարունակել այնպիսի պայմաններում, յերբ արգումենտի ու առևտրական բանակցությունների փոխարեն բուռնցքն ե գործի դրվում և յերբ բանակցություններին յուրատեսակ ձևով «ոգնում են» վոստիկանական ու քրեյսական տարրերը մանջուրական սլիմակ-զվարդիականներից։

Այդ ժամանակից բանակցությունները չվերսկավեցին, իսկ խժողությունները գծում շարունակվում են, գծի գործունեյությունը ջլատվում և Սվելին. մեր հայտարարություններն ու բողոքներն այդ խժողությունների դեմ անպատասխան են մնում ծավունիայի կողմից, վորն իպուր ճգնում և մեզ համոզել թե նա վոչ մի առնչություն չունի այդ խժողությունների հետ, վորոնց համար իրո պատասխանատու յե միայն «անկախ», «ինքնուրույն» Մանջուրգոն։ Մանջուրգոյի այդ անկախության մասին մենք, ինչպես և ի միջի այլոց ամբողջ աշխարհը, հատուկ կարծիք ունենք։

Մանջուրգոն դեռ չի ճանաչված վոչ մի պետության կողմից, և բոլորն այն դիտում են բացառապես իրեն ճապոնական կառավարության և Մանջուրիայի ճապոնական հրամանատարության գործակալություն։ Յեթե հարկավոր լինելին զբա միանդամայն որյեկտիվ ապացույցներ, ապա այդպիսիք վերջերս ներկայացրեց ՏԸՄԸ-ը, հրապարակելով հայտնի փաստաթղթերը, վորոնց իսկությունն ամեն մի կասկածից դուրս և։ Այդ ժամատաթղթերից յերեսում ե, վոր գծի խորհրդային ծառայողների նկատմամբ բըռնի գործողությունները, վորոնք իրը ձեռք են առնված հանուն մանջուրական իրավադատության, թելազրդած են ճապոնական ուազմական և վարչական գործականների կողմից, վորոնք այդ հանապարհով կամեցել են դիմք չնչին զնով ստանալ. մեզանից։ Այդ պատճառով մենք հայտարարեցինք ճապոնական կառավարությանը, վոր չենք կարող ընդունել մանջուրական իշխանություններին մատնանշելու պատրվակը և Զինապրեկայան յերկաթղծում մեր ունեցած իրավունքների ու շահերի խախտման համար ճապոնական կառավարությունից բացի վոչ վոքի պատասխանառու համարել չենք կարող։

Խնդիրը, սակայն, միայն Զին-արևելյան յերկաթղիծը չեն հնում մեր իրավունքները վոտնահարելու հետ միասին, ճապո-

Նիմայում քաղաքական դործիչները, այդ թվում նաև նազո՞նական կառավարության պաշտոնական ներկայացուցիչները, ինչպես նաև մամուլը, սկսել են բացահայտ կերպով քննարկել Խորհրդային Միության գնճ Ծովափնյա և վողջ Հեռարելյան յերկիրը դրավելու համար պատերազմելու հարցը: Խողիքները լոկ խռակցություններով չեւ սահմանափակվում, այլև Մանջուրիայում, մեր սահմաններին մոտիկ կուտակվել են զգալի քանակությամբ ձապնական դրաքեր, ուղմանյութեր են բերվում, յերկաթզներ ու խճուցիներ են կառուցվում և այլն:

Այսպիսով ծաղել եւ վոչ միայն մեր դիմքը ձապնիայի կողից բռնի կերպով դրավելու սպառնակիքը, այլև ուղղակի սպառնակիք մեր սահմաններին իրերի այդպիսի դրությամբ մեր կառավարությանն այլ բան չեր մնում անելու, յեթե վոչ ձեռնարկելու մեր սահմանների ամրացմանը, այնահետ փոխադրելով դրահամար անհրաժեշտ ուժեր և ձեռնարկելով այլ ուղմական միջոցների Բայց միևնույն ժամանակ մենք բացառապես պաշտպանողական միջոցներ ենք դործադրում: Ձապնիան, ինչպես հարանիյե, անհոգու կերպով պատերազմի յեւ պատրաստվում, վորը հարձակողականից բացի այլ պատերազմ լինել չի կարող, վորովհետեւ ձապնիայի անվտանգության գնճ վոչ վոր վոանձգություն չի անում:

Ձապնիայում, ինարկե, քիչ չեն խելացի, ազդեցիկ մարդիկ, վորոնք աևսնում են այն վանդն ու սիսկը, վորն սպառնում և ձառքո՞նիային ուժով ու յեռնոգով լիցուն այնովիսի զիվանտի հետ պատերազմի բռնվելը, ինչպիսին և մեր Միությունը, և բնականորեն նախընտրում են մեզ վճարել միքանի հարյուր միլիոնին, վորքան իրոք արժի դիմքը, քան միլիարդներ ծախսել ապամածովային բյուջեն ավելացնելու և ուղմական գործողությունների վրա, վորոնց արդյունքը, բավարար կապաւում, նրանց համար կասկածելի յի:

Բայց կան նաև ավելի ավանտյուրիստորեն արամաղրված շրջաններ, համակապես զինվորական, վորոնց համար, ակնհայտըն, կյանքի բարձրագույն նպատակը պատերազմն և, անկախ այն բանից, թե ինչ և նոր բերում: Իսկ ինչ վերաբերում և արտաքին աշխարհի վերաբերմունքին՝ ձապնիայի հետ համարակոր ընդհարման հանգել, ապա մենք կարող ենք արձանադրել, վոր ձապնիան բարոյապես միանգամայն կզգիացած եւ ամրող աշ-

Հսարհում: Նրա գործողություններն ինչպես Զինաստանի դեմ, այնպես ել հնարավոր գործողությունները մեր դեմ, դատապարտում և ամրող քաղաքակիրթ աշխարհը, այն ամրող աշխարհը, վորի քաղաքականությունն իրը թե մեր դեմ պաշտպանելու յև ձեռնարկում ձապոնիան:

Ճապոնիան իր ուղղմական ոպերացիաներն սկսելով յերկու տարի առաջ, յելնում եր այն հաշվից, թե բավական կլինի հայտարարել, վոր այդ գործողություններն ուղղված են Խորհրդային պետության դեմ, վորպեսզի վորդ կապիտալիստական աշխարհն նրա կողմն անցնի և որհնի նրա գործողությունները: Հենց այդտեղ ել նա սխալվեց, ինչպես սխալվեցին, փակադի մեջ ասենք, գերմանական ֆաշիստները: Ճապոնիայի հետ մեր ունեցած վեճի մեջ նույնիսկ կապիտալիստական աշխարհն ընդունում և մեր իրավացիությունը և ադրեսիվ զիտավորությունները վերադրում և բացառապես ճապոնիային: Նա այդ անում ե, իհարկե, վոչ թե մեր գեղեցիկ աշխերի համար, այլ վորովհետև գիտակցում ե, վոր յեթե ճապոնիայի գործողություններն ու քաղաքականությունը շուռ կղան նաև նրա սեփական շահերի դեմ: Դրա վրա պետք ե ավելացնել, վոր պատերազմի տեսդուս պատրաստությունը ճապոնիային ստիպում և ուժնուացնել իր արտահանությունը, դեմքինդի դիմելով միանգամայն անսահմանափակ չափերով, վօրով նա իր դեմ և հանել անգամ այնպիսի յերկրների, վորոնք պոտենցիալ կերպով կարող ելին նրան բարեկամ համարվել:

Մեր քաղաքականությունը պարզ ե: Մենք չենք ձգտում ովտագործել բարենպաստ իրադրությունը, մենք չենք ձգտում պատրազմել վորեւ պայմաններում: Մենք ասում ենք ճապոնիային—մենք քեզ չենք սպառնում, մենք աչք չենք դնում վոչ քո հողերին, վոչ ել մեր սահմանից դենք ընկած մյուս տերիտորիաներին, մենք ուղարկ ենք քեզ հետ այնպիս առլրել ինչպիս ապրել ենք մինչև հիմա, ապրել խաղաղ, հարգել քո իրավունքներն ու շահերը, պահանջելով միայն, վոր դու նույն կերպ վերաբերիս մեր իրավունքներին ու շահերին: Խաղաղասիրության քո առաջին քայլն ու ապացույցը պետք ե լինի՝ զաղարեցնել վոստիկանական բոնի վործողությունները Զինաարենելյան յերկություն, վերականգնել այնտեղ մեր խախտված իրավունքները

և ապա հանդիսատ շարունակել բանակցությունները գծի առևտրական տեսակեաից արդարացի դնի մասին ճապոնիայի խաղաղապահությունն ապացուցելու հաջորդ քայլը պետք ե լինի սուսրադրել իրար վրա չհարձակվելու պայմանագիրը, վորը մենք առաջարկել ենք գետ յերկու տարի առաջ: Մենք կամենում ենք հուսար վոր ճապոնիան կվարովի վոչ թե զինվորական ավանդյուրիստների, այլ իր վաղջախոհ հայրենասերների բանական խորհուրդների համաձայն:

### ԼԻԱԿԱՏԱՐ ՅԵՎ. ԸՆԴՀԱՆՈՒԹԻՐ ԶԻՆԱԹԱՓՈԽԹՅՈՒՆԻ ՅԵՐԱԾԽԻՑ Ե ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԵՐԱԳՄԻ

Մյուս յերկրների հետ Խորհրդային Միության հարաբերությունները շարադրելուց հետո ինձ մասում և միքանի խոսք ել ասել մեր վերաբերմունքի մասին այն միջազգային կազմակերպության հանդիսող, վորին անդամ և Միությունը, այն եւ դինաթափման կոնֆերանսի հանդելու Այդ կոնֆերանսը ձևականորեն զեւսու կենդանի յի համարվում: (0իծաղ): Դիակ անունը, վորը յես այլի նրան Ամերիկայում, ամեննին չափաղանցություն չե: Խոսքն այժմ այն մասին և միայն՝ տալ նրան մահվան վկայական, թէ վորձել դալվանացնել դիակը: Գալվանացումը հնարավոր ե, և կոնֆերանսը կարսդ և միասնական առջել տակավին, բայց դա այլևս կլինի վաչ թե զինաթափման կոնֆերանս, այլ սպառապինումը լրացնելու կոնֆերանս:

Մենք կոնֆերանս եյինք զնում խաղաղության յերաշխիքներ, ընդհանուր անվտանգության յերաշխիքներ մշակելու համար, բայց վորեւե մեկի սպառապինում լրացումը չի կարող այդու պիսի յերաշխիք համարվել: Իսկ յերբ մեզ առում են, —վումանց սպառապինումների լրացում և մյուսների զինաթափում, ապա մենք վախենում ենք, վոր կկատարովի այդ փորմուլայի առաջին մասը միայն, առանց յերկրորդի, վորովհետեւ կատարելագիս պարզ ե, վոր չի հաջողվի վաչ մի չափով զինաթափել հենց նրանց, ովքեր այժմ արդեն պրակտիկայում գործադրում են իրենց սպառապինումը և բացահայտ կերպով սպառնում են մոտիկ սպառապայում այդ աննև ավելի մեծ մասշտաբով:

Հնարավոր չի լինի պահանջել վոր զինաթափ արվեն միայն այն պետությունները, վորոնց դեմ ուղղված են այդ սպառապի-

ՆՇԱՑՄԱՆԵՐԸ: Զինաթափման մասին հնարավոր կլինի նորից ըրջորեն խոսել այն ժամանակ միայն, յերբ պետությունները կդադարեն իրար դրա չհարձակվելու պակտերի հետ վարզելի իրեն թղթի կտորների, ցինիկորեն առաջարկելով «ավելի մեծ թվով» կնքել այդպիսիք, և յերբ նրանք անկեղծորեն կհրաժարվեն պատերազմից՝ իրեն միջազգային վեճերը լուծելու մեթոդից: Խակ այն ժամանակ Ազգերի լիգայի փոշոտ արխիմսերից դուրս կրերվեն զինաթափման խորհրդային նախագծերը, և խոսք կլինի բռւն զինաթափման, լիակատար և ընդհանուր զինաթափման մասին, վոչ թե սպառադինման մեջ այս կամ այն բաժինն ունենալու մասին:

## ԽՍՀՄ-ի ԱՃՈՂ ԶՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԶՈՐ ԳՈՒՐԾՈՆ Ե

Ընկերներ, իմ հաղորդումով յես աշխատեցի Զեղ ծանոթացնել միջազգային կյանքում տիրող ներկայի տեսլինցների հետ, ինչու այժմեյական դարձած «պատերազմ», թէ խաղաղություն» հարցի շուրջը կատարվող ուժերի դասավորման հետ և ցույց տալ ԽՍՀՄ-ի դերն այդ ուժերի պայքարում: Բայց դեռ վոչ բոլոր պետություններն են վորոշել իրենց դիրքերն այդ պայքարում և իրենց վերաբերմունքը Խորհրդային Միության հանդեպ: Դրության բնորոշ առանձնահատկությունն այն ե, վոր վերաբերմունքը մեր Միության հանդեպ դարձել և մյուս պետությունների խաղաղասիրության չափանիշը:

Նախագահ Ռուզիկելու մի ինչ-վոր կապակցությամբ ինձ ասոց, թե ինչ-վոր մեկի հաշվով մարդկության 92 տոկոսը խաղաղություն և ցանկանում և միայն 8 տոկոսն և ձգտում խախտել այդ խաղաղությունը: Այդ 8 տոկոսը ներկայացնում ե, յերեք, պատերազմի համար անբարենպաստ ճանաչված յերկրների համատարած աղքարնակությունը (ծխաղ): Ենս կարծում եմ, վոր անիրավացի կլիներ այդ յերկրների ամրող աղքարնակությանը կամ նույնիսկ մեծամանությանը վերաբերել խաղաղությունը խախտելու հանցավոր դիտավորությունները, այնպես վոր պատերազմի ծարավ ունեցողների տոկոսն զգալիորեն ավելի փոքր ե, քան իմ հիշատակած հաշվարկումներում:

Այստեղից ինքնըստինքյան խնդիր ե ծագում մարդկության վիթխարի մասսային համախմբել՝ նրա կամքը խախտելու աս-

պարեղում չնշին փոքրամասնությանն արդելք հանդիսանալու նպատակով, եռուքը չպետք է վերաբերի նոր խմբավորումներին, հին որինակալ ռազմական դաշինքներ ստեղծելուն, այլ՝ բոլոր նրանց որինական ինքնառաջապահանության համար համագործակցելուն, ովքեր շահագրղոված չեն խաղաղության խախուժով, վորպեսի վոչ վոքի հաճելի չլինի վոտնձություն կատարել խաղաղության դիմ և ԱՀՄ-ն իր կողմից պատրաստ և մասնակցելու այդ խողը իրավորձմանը, վորովհետեւ այդ ուղղությամբ աշխատանքը մեր մասնակցելու թիվաղբում Ամբողջ աշխարհի աշխատավորության շահերը, բոլոր ժողովուրդների, այդ թվում, ինարկե, նաև Առքերդային Միության ժողովուրդների անվանդությունը:

Այն ժողովարդները, վորոնք, մեր ժողովուրդների պես, առաջիւաղույն ապացույցներ ևն ավել իրենց խաղաղասիրության, ուրիշ անվտանգության նկատմամբ տածած հարգանքի, առաջիւաղբույն իրավունք ունեն իրենց սեփական անվտանգության:

Համաձայնիկով համագործակցելու ուրիշ պետությունների հետ և նիրկայացնելով, շնորհիվ մեր քաղաքականության մշտակայացության, միջադպային պարագայրությունների կատարման բարձրագույն յերաշխիքը, մենք, ստեղյան, չպիտք և մուանանք, վոր մենք զիմում ենք կապիտալիստական պետությունների, վորոնց կառավարություններն անկայուն են, հաճախակի փոփոխում են, վորի հետեանքով հնարավոր ե, վոր իշխանության վլուխն անցնեն այնպիսի խթենք և մարդիկ, վորոնք, շնորհիվ մեր պետության հանդեպ տածած զատկարգային ատելության, յերբեմն պատրաստ են զոհելու նաև իրենց ազգային-պետական շահերը:

Հարկադրված ինքնառաջապահանության վիճակում զանվելով, մենք զբա համար ել առաջիւաղեալ պես և առաջվանից ավելի մեծ չափով կամբացնենք ու կիսատրիկադորձնենք մեր անվտանգության հիմնական պաշտպանությունը—մեր կարմիր բանակը, Կարմիր նավատրը և Կարմիր ավելացյան: (Նախահարությաններ): Մենք պետք են հիշենք, վոր խաղաղության բարեկամների միացյալ ջանքերի անհաջողության գելքում այդ խաղաղության խախուժումը կարող և առաջին հերթին մեր գենմ ուղղվել:

Այդ պատճառով մենք պետք են հիշենք, վոր, հակառակ մեր կամքին, կարող և հասնել այնպիսի մոմենտ, յերբ հարկադր

կլինի արդարացնել ընկ. Ստալինի այն հայտարարությունը, թե  
մեր հողից վոչ մի վերջոկ չ' նք տա: (Բուռն ծափանարարյաններ):

Խորհրդային հողի յուրաքանչյուր վերջոկի պաշտպանու-  
թյանը, լինի դա Արևմուտքում թե Արևելքում, կմտնակցին  
զոչ միայն կարմիր ռազմական ուժերը, այլև նրանց շարունակու-  
թյունը՝ մեր ընդարձակածավալ Միության կարմիր ժողովուրդնե-  
րը: Այն փաստը, վոր նրանց զեկավարում և կարմիր կուսակցու-  
թյունը՝ Համկ(ը)եւ և նրա ներշնչող ու առաջնորդ ընկ. Առաջի-  
նը, նրանց համար ապահովում և նույնպիսի ռազմական հաղթա-  
նակներ, ինչպես վոր նրանք ունեն խաղաղ հաղթանակներ: (Բուռն  
ծափանարարյաններ, վորոնի սկայի լին փոխվում):

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թուրքուական Փաշխոմի երան վերջացել և . . . . .	Եջ
Պատերազմական ազանտյուրաների ռազմագրախոսները . . . . .	3
Եապիտաւական պէտությունների յերեք խմբավորումների պայքարը . . . . .	6
Խաղաղության ապահովումը մեր գիվանադիտության հիմնական խնդիրն և . . . . .	10
Միջազգային գործակության կազմակերպումը Խաղաղության ամրապնդման համար . . . . .	13
Միացյալ Նահանգներում . . . . .	13
Բյուցքիա . . . . .	15
Ֆրանսիա . . . . .	16
Իտալիա . . . . .	17
Մեծ Բրիտանիա . . . . .	18
Լեհաստան . . . . .	18
Մերձավորական յերկրներ . . . . .	19
Գարսկաստան և Ավգանստան . . . . .	20
Փրցը Անտանտա . . . . .	20
Մյուս յերկրներ . . . . .	21
Չինաստանում . . . . .	21
Խորհրդային գերմանական հարաբերությունները . . . . .	22
Դրությունը հետազոր Արեկելքում . . . . .	27
Հիակատար ընդհանուր զենաթափությունը յերացիք ընդդեմ պատերազմի . . . . .	33
ԽՍՀՄ-ի անող զորությունն անվանելության հզոր գործոն և . . . . .	34

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220038549

(154)

A II  
38549

ԳԻՒԾ 30 ԿՈՊ.



М. М. ЛИТВИНОВ  
СССР  
в борьбе за мир

---

Партиздан 1934 Эривань